Ծննդեան տօնը ման է դալիս Հայաստան աշխարհում...

* * *

Ռուսաց եկեղեցու վրայ ելեքտրական կարմիր աստղը Արարատեան դաշտի առաջացող մութին նշան է անում: Ի զո՞ւր: Մութը վառ է հաղար մոմերով եւ Վաղարշապատը պղնձէ ձայներով խօսում է ոսկէ աստղերի հետ:

Արովեան փողոցի խանութպանները փակում են դռները, ծալում վերջին միլիարդը եւ վազում եկեղեցի: Շուկան լռել է աղօտ լոյսերի տակ, խուժանի երախաները խունկի հոտից հարբել են, կարմիր բանակայինները նոր ըղձեստ են հագել եւ մոմ գնել, իսկ կոմիսարները մնացել են շուարած՝ հոգիները տրորող այս մութի առջեւ:

Ա՜յսքան էլ ժողովուրդ... Եկեղեցում կանգնելու տեղ չկայ:

Աւագ սեղանի վրայ, շարականները պըսպըղուն արծաթների միջից բարձրանում են հեծկլտող լոյսի նման, լուսաւոր թեւեր բաց անում ու հանդիսաւոր թափորով սուրում դէպի վեր, անյայտի դռները բախելու համար: Երգչախումբը պատասխանում է բամբ, որոտալից ձայնով, զինուորեալ եկեղեցու բերկրալի թափը հնչեցնում աստուածային գործողութեան վեհաշուք վայրկեանի վրայ:

Մոմակալները ծանրաբեռնուած են: Պատերի վրայ, սրբերի պատկերները կարծես հոգի առած դողդղացող բոցերի տակ շարժւում են: Զոքած զինուորների գոյնզգոյն զգեստները ստուերների տակ բռնկած ծաղիկների են նմանում:

Պատարագիչ քահանայի թագաւորական ստուերի մօտ սարկաւագների արքունեաց հոյլը, Կիլիկեան չրջանի մանրանկարչական պատկերացումով, քչոցների տակ պտոյտ է գալիս ու մարմնի եւ արիւնի մեծ ողբերգութիւնը ներկայացնում:

Երգը, սարից վար նետուող աղբիւրի նման, յստակ հնչում է, հոգիների առջեւ կանգ առնում, սարսռում ու նոր թափով, ժայռից վայր թափուելով, հառաչում եւ աղմկում:

Ժողովուրդը կարծես մի ինչ որ վտանգ է զգում, ու գայլերից վախեցած հօտի պէս, մէկը միւսին կպած, ծնկաչոք աղօթում է, ամբողջ սրտով կառչում երգին, լոյսերին, խունկի հարբեցուցիչ բուրումին: Մեծ վիշտը եւ մեծ վախը, դարերի ահաւոր պարիսպների տակից փախած, չոքել են այստեղ եւ ջերմեռանդ խօսքերով կարկառում են դէպի Աստուած մի կտոր պատռած սիրտ եւ չունի բերանը մնացած հոգիների փետուրը:

Զանգակները ղօղանջում են: Բեթղեհեմը աշնանային հարբած թռչունի նման խօսում է աշխարհին: Ճրագալոյսը յոգնաբեկ հայ ուսերին թեւեր է տալիս: Աղօթքները կարմիր գինու նման այրում են շրթունքները: Պատարագը ժողովում է սրտերի վիշտերը, ու հեռաւոր երկիր մեկնող թռչունների երամի պէս, բարձրանում է, տարածութեան մէջ պտոյտ գալիս եւ տօթ քամիների հոսանքի հետ սուրում դէպի անդրերկրեայ հիւսիսը:

Օ՜, գեղեցիկ սաւառնումը լեռների կատարին, ամպերի մէջ, անհունի սրտին, քչոցների եւ բուրվառների հմայիչ եւ կայծկլտող ձայների հետ:

Դուրսը, փողոցը խոր մութի մէջ, լուակեաց տների առջեւ պառկել է եւ լսում է եկեղեցու լուսաւորուած դռնից դուրս թափուող ճառագայթներին: Տարօրինակ մի լռութիւն է տիրում, ծանր եւ դաժան: Ուշ մնացած մարդիկ արագ քայլով մօտենում են ժամին եւ, որովհետեւ ներսը տեղ չկայ, նրանք չոքում են դռան առջեւ, մէկը միւսին կպած, մէկը միւսը փնտռելով:

Ցանկարծ, ռուսաց եկեղեցու մօտից, վառուած ջահեր են շարժւում եւ խուլ աղաղակներ են լսւում: Դռան առջեւ կանգնողները անհանգիստ շարժւում են եւ մտատանջ նայում այն կողմը:

Բուլվարի մօտից ստուերներ են առաջանում: Ջահերի դեղնագոյն բոցերը մարւում եւ բռնկում են, վեր ցցւում, սպառնում: Աղաղակները քանի գնում ուժեղանում են: Շատերը եկեղեցուց դուրս են նետւում եւ կանգ առնում մոմը ձեռքի մէջ: Ժողովուրդը զգում է մի ինչ որ վտանգ: Կանայք եւ երախաները վախենում են, ներս փախչում, չոքում:

Թափօրը մօտենում է:

Հեռուից, մարդկանց այդ խումբը, մանաւանդ խուլ աղաղակները, վայրենիների հորդաներն են յիշեցնում, թրքաց շախսէյվախսէյի մոլեռանդ ճիչերն են մտաբերում կամ

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան